Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
դեկտեմբերի 24 -ի N 948 - Ա
որոշման

«ՍԻՐԻԱՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ»
ԾՐԱԳԻՐԸ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նպաստել Սիրիայից ներգաղթած սիրիահայ ընտանիքների սոցիալ-տնտեսական ինտեգրացմանը հայ հասարակությունում |
| 2. | Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերից, տուրքերից, պարտադիր վճարների՝ օրենքներով նախատեսվող արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում Գեմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարությունը (BMZ) և Հերման Գմայների հիմնադրամը Գերմանիայում (HGFD): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, քաղ. Երևան, Հր. Քոչարի 8, բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքում:<br>Սոցիալական, տնտեսական և կրթական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 24.11.2019-31.12.2023 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է 695 679 537 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ա) 400 սիրիահայ ընտանիք, մոտավորապես 1600 մարդ (որոնցից մոտավորապես 850 երեխա և մոտավորապես 750 ծնող), որոնք Հայաստան են ներգաղթել սիրիական պատերազմի ընթացքում.<br>բ) հայաստանցի խոցելի ընտանիքների 20 երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն իրականացվելու է 24.11.2019-31.12.2023 թվականների ընթացքում: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, | 1. Կրթադաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրակա- |

| | | |
|---|---|---|
| | անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ցում ՝ 5 տարվա համար կազմում է 44 798 708 ՀՀ դրամ (որից՝ 28 033 920 ՀՀ դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում).<br>*1.1. Զարգացման խաղեր և դրանց համար անհրաժեշտ նյութերի տրամադրում (գրքեր, խաղալիքներ, ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփան, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ 1 953 432 ՀՀ դրամ.*<br>*1.2. Զարգացման խմբակների վճարներ (երգ, պար, սպորտ, արվեստ և այլն)՝ 27 131 000 ՀՀ դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում).*<br>*1.3. Էքսկուրսիաներ (սնունդ և տեղափոխման ծառայություններ)՝ 1 636 542 ՀՀ դրամ.*<br>*1.4. Ամառային ճամբարներ (մասնակցության և տեղափոխման ծառայություններ)՝ 13 174 814 ՀՀ դրամ.*<br>*1.5. Մշակութային միջոցառումների տոմսեր (թատրոն, կինո, համերգ և այլն)՝ 902 920 ՀՀ դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում):*<br>2. Առաջնային առողջության պահպանում՝ 5 տարվա համար կազմում է 5 860 296 ՀՀ դրամ:<br>3. Համայնքային միջոցառումների կազմակերպում՝ շահառուների մասնակցությամբ (սնունդ, տեղափոխման ծառայություններ և այլն)՝ 5 տարվա համար կազմում է 4 232 436 ՀՀ դրամ:<br>4. Նյութական աջակցություն, սոցիալական փաթեթի տրամադրում և աշխատանքային գործիքների տրամադրում՝ 5 տարվա համար կազմում է 25 926 384 ՀՀ դրամ:<br>*4.1. Սննդի փաթեթ և հագուստ՝ 3 255 720 ՀՀ դրամ.*<br>*4.2. Աշխատանքային գործիքներ (վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, ոտնահարդարման գործիքներ, կտորեղեն և կարի այլ գործիքներ, կարի մեքենաներ, թխվածք պատրաստելու վառարան, համակարգիչներ և այլն)՝ 22 670 664 ՀՀ դրամ:*<br>5. Ցերեկային խնամքի կենտրոնում երեխաների համար պատրաստվող սնունդ և նրանց՝ դպրոցից կենտրոն տեղափոխման ծառայություն՝ 5 տարվա համար կազմում է 10 255 518 ՀՀ դրամ:<br>*5.1. Սնունդ՝ 5 209 152 ՀՀ դրամ.* |

| | | |
|---|---|---|
| | | *5.2. Տեղափոխման ծառայություն՝ 5 046 366 ՀՀ դրամ.*<br>6. Ծրագրի իրականացման համար վարձակալված գրասենյակային տարածք՝ 3 689 816 ՀՀ դրամ:<br>7. Այլ ծրագրային ծախսեր՝ 5 տարվա համար կազմում է 249 504 815 ՀՀ դրամ.<br>*7.1. Ենթադրամաշնորհներ (այս գումարը տրվում է մոտավորապես 55 սիրիահայ ընտանիքներին՝ փոքր բիզնես սկսելու համար) 138 910 720 ՀՀ դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում).*<br>*7.2.Աշխատավարձի սուպերվիզիա (մասնագիտական աջակցություն անձնակազմին)՝ 434 096 ՀՀ դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում).*<br>*7.3. Շահառուների մասնագիտական վերապատրաստման և կարողություն-ների բարձրացման դասընթացներ՝ 109 891 402 ՀՀ դրամ.*<br>*7.4. Թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարությունների վճար՝ 268 597 ՀՀ դրամ:*<br>8. Տպագրություններ, թարգմանություններ և համընթաց թարգմանություն՝ 5 տարվա համար կազմում է 4 750 638 ՀՀ դրամ:<br>9. Միջոցառումների (սեմինարներ, կոնֆերանսներ) համար նախատեսված դահլիճ և սնունդ՝ 5 տարվա համար կազմում է 20 195 774 ՀՀ դրամ:<br>10. Տեսանյութերի և ձեռնարկների պատրաստման ու ներկայացումների բեմադրման ծախսեր՝ 5 տարվա համար կազմում է 3 103 786 ՀՀ դրամ:<br>11. Գրասենյակի տեխնիկական բազայի ապահովում (պատճենահանման սարք, տպիչ, սկաներ և այլն)՝ 5 տարվա համար կազմում է 6 294 392 ՀՀ դրամ:<br>12. Կահույք և կենցաղային տեխնիկա՝ 8 862 612 ՀՀ դրամ.<br>*12.1. Կահույք՝ գրասենյակի և ցերեկային խնամքի կենտրոնի համար (մահ-ճակալներ, ներքնակներ, աթոռներ, սեղաններ, անկողնային պարագաներ, գրապահարաններ, պահարաններ, խոհանոցային կահույք և այլն)՝ 5 456 044 ՀՀ դրամ.*<br><br>*12.2. Կենցաղային տեխնիկա (միկրոալիքային վառարան, սառնարան, գազօջախ, աման լվանալու մեքենա, սպասք և այլն) 3 406 568 ՀՀ դրամ:*<br>13. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջական |

| | | |
|---|---|---|
| | | աշխատող) աշխատավարձեր (4 սոցիալական աշխատող, 1 հոգեբան, 1 զբաղունակության մասնագետ, 3 մանկավարժ և 1 խոհարար)՝ 5 տարվա համար կազմում է 162 959 638 ՀՀ դրամ.<br>*13.1. Սոցիալական աշխատող (թվով 4 հոգի)՝ 93 764 736 ՀՀ դրամ.*<br>*13.2. Հոգեբան (թվով 1 հոգի)՝ 19 534 320 ՀՀ դրամ.*<br>*13.3. Զբաղունակության մասնագետ (թվով 1 հոգի)՝ 22 790 040 ՀՀ դրամ.*<br>*13.4. Մանկավարժ (թվով 3 հոգի)՝ 22 355 944 ՀՀ դրամ.*<br>*13.5. Խոհարար (թվով 1 հոգի)՝ 4 514 598 ՀՀ դրամ:*<br>14. Գրասենյակի վերակառուցում և վերանորոգում (վերակառուցումն իրենից ներկայացնում է առկա 2- հարկանի շինության վրա ևս 1 հարկի ավելացում: Այն ներառում է նաև արևային վահանակների տեղադրում: Նախատեսվում է նաև իրականացնել 3 հարկերի վերանորոգման աշխատանքներ: Տվյալ շինությունը սեփականության իրավունքով պատկանում է ՍՕՍ մանկական գյուղեր ՀԲՀ-ին)՝ 25 503 683 ՀՀ դրամ:<br>(Քանի որ ծրագրի սկիզբը նախատեսված է 24.11.2019 թվականին, ուստի, շինարարության համար եղանակային անբարենպաստ պայմանների պատ-ճառով այն հետաձգվում է մինչև 2020 թվականի II եռամսյակ և նախատեսվում է ավարտել III եռամսյակում: Տվյալ ժամանակահատվածում ծրագրի իրա-կանացումն ապահովելու համար վարձակալվելու է գրասենյակային տարածք):<br>(Ծրագրի ընթացքում շահառուների համար նախատեսված ամբողջ ծառայությունները տրամադրվելու են/իրականացվելու են տվյալ շենքում: Բացի դրանից՝ շենքի I և II հարկերը ծառայելու են որպես ցերեկային խնամքի կենտրոն՝ նախադպրոցական տարիքի և տարրական դասարանների երե-խաների համար:)<br>Կազմակերպական ծախսերը՝ 5 տարվա համար կազմում են 119 741 041 ՀՀ դրամ:<br>1. Աշխատակազմի ծախսեր.<br>2. Տրանսպորտային միջոցի նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և ապահովագրություն.<br>3. Տրանսպորտային միջոցի վառելանյութ. |

| | | |
|---|---|---|
| | | 4. Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ.<br>5. Անձնակազմի ապահովագրություն.<br>6. Կոմունալ ծառայություններ.<br>7. Աուդիտորական ծառայություններ.<br>8. Ծրագրի նախնական, ընթացիկ և վերջնական գնահատում.<br>9. Ծրագրի շահառուների տոնայցերի, տարբեր հանդիպումների կազմակերպման և մասնակցության համար տրանսպորտային միջոցի ձեռքբերում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Զարգացման խաղերի և դրանց համար անհրաժեշտ նյութերի (գրքեր, խաղալիքներ, ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփան, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ, և այլն) ձեռքբերում՝ 5 տարվա համար կազմում է **1 953 432** ՀՀ դրամ;<br>2. Շահառուների մասնակցությամբ համայնքային միջոցառումների կազմակերպում, հագուստի և սննդի փաթեթի տրամադրում, էքսկուրսիաների, ամառային ճամբարների մասնակցություն, ցերեկային խնամքի կենտրոնում երեխաների համար պատրաստվող սննդի ձեռքբերում, տեղափոխման ծառայություն՝ 5 տարվա համար կազմում է **32 555 030** ՀՀ դրամ.<br>2.1. Սննդի փաթեթի և հագուստի ձեռքբերում՝ **10 915 344** ՀՀ դրամ.<br>2.2. Տեղափոխման ծառայություն՝ **8 616 806** ՀՀ դրամ.<br>2.3. Ամառային ճամբարի մասնակցության վճար՝ **13 022 880** ՀՀ դրամ:<br>3. Աշխատանքային գործիքների ձեռքբերում (վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, ոտնահարդարման գործիքներ, կտորեղեն և կարի այլ գործիքներ, կարի մեքենաներ, թխվածք պատրաստելու վառարան, համակարգիչներ և այլն)՝ **22 670 664** ՀՀ դրամ:<br>4. Առաջնային առողջության պահպանում՝ 5 տարվա համար կազմում է **5 860 296** ՀՀ դրամ:<br>5. Տարածքի վարձակալություն՝ **3 689 816** ՀՀ դրամ:<br>6. Շահառուների մասնագիտական վերապատրաստման և կարողությունների բարձրացման դասընթացների ծառայություն՝ 5 տարվա համար կազմում է **109 891 402** ՀՀ դրամ:<br>7. Թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարությունների ծառայու- |

| | | |
|---|---|---|
| | | թյուն՝ **268 597 ՀՀ** դրամ:<br>8. Տպագրությունների և թարգմանությունների ձեռքբերում՝ 5 տարվա համար կազմում է **4 750 638 ՀՀ** դրամ:<br>9. Միջոցառումների (սեմինարներ, կոնֆերանսներ) համար նախատեսված դահլիճի վարձակալություն՝ ներառյալ սննդի ձեռքբերում՝ 5 տարվա համար կազմում է **20 195 774 ՀՀ** դրամ:<br>10. Տեսանյութերի և ձեռնարկների պատրաստում ու ներկայացումների բեմադրման ծառայություններ՝ 5 տարվա համար կազմում է **3 103 786 ՀՀ** դրամ:<br>11. Գրասենյակի տեխնիկական բազայի ապահովում (պատճենահանման սարք, տպիչ, սկաներ և այլն)՝ 5 տարվա համար կազմում է **6 294 392 ՀՀ** դրամ:<br>12. Կահույքի (մահճակալներ, ներքնակներ, աթոռներ, սեղաններ, անկողնային պարագաներ, գրապահարաններ, պահարաններ, խոհանոցային կահույք, գրասենյակային կահույք և այլն) ձեռքբերում՝ **5 456 044 ՀՀ** դրամ:<br>13. Կենցաղային տեխնիկայի (միկրոալիքային վառարան, սառնարան, գազօջախ, մսաղաց, սպասք և այլն) ձեռքբերում՝ **3 406 568 ՀՀ** դրամ:<br>14. Գրասենյակի վերակառուցման, արևային վահանակների ձեռքբերման և վերանորոգման ծախսեր՝ **25 503 683 ՀՀ** դրամ:<br>15. Տրանսպորտային միջոցի նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և ապահովագրություն՝ 5 տարվա համար կազմում է **1 411 355 ՀՀ** դրամ;<br>16. Տրանսպորտային միջոցի վառելանյութի ձեռքբերում՝ 5 տարվա համար կազմում է **2 900 847 ՀՀ** դրամ:<br>17. Ծրագրի շահառուների տունայցերի, տարբեր հանդիպումների կազմակերպման և մասնակցության համար տրանսպորտային միջոցի (մարդատար ավտոմեքենա) ձեռքբերում՝ **15 193 360 ՀՀ** դրամ:<br>18. Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ 5 տարվա համար կազմում է **8 011 242 ՀՀ** դրամ:<br>19. Կոմունալ ծառայություններ՝ 5 տարվա համար կազմում է **3 689 273 ՀՀ** դրամ:<br>20. Աուդիտորական ծառայություններ՝ 5 տարվա համար կազմում է **10 309 780 ՀՀ** դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | 21. Ծրագրի առաջընթացն ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվելու է նախնական (ծրագրի սկզբում առկա իրավիճակի գնահատում), ընթացիկ (կարճաժամկետ արդյունքների գնահատում՝ համոզվելու համար, որ ծրագիրն ընթանում է ըստ պլանավորվածի) և վերջնական գնահատում (հավաստիանալու համար, որ ծրագիրն իրագործել է իր առջև դրված նպատակները)՝ 5 տարվա համար կազմում է **8 460 531** ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը 24.11.2019-31.12.2023 թվականների համար կազմում են **119 741 041** ՀՀ դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի **17.21** տոկոսը.<br>այդ թվում՝<br>1. Աշխատակազմի ծախսեր (սպասարկող անձնակազմի աշխատավարձ)՝ թվով 3 հոգի՝ 5 տարվա համար կազմում **է 65 423 693** ՀՀ դրամ.<br>*1.1. Համակարգող (թվով 1 հոգի)՝ **31 906 056** ՀՀ դրամ.*<br>*1.2. Ֆինանսական և ադմինիստրատիվ մենեջեր (թվով 1 հոգի)՝ **27 917 799** ՀՀ դրամ.*<br>*1.3. Տեխնիկական աշխատող (թվով 1 հոգի)՝ **5 599 838** ՀՀ դրամ.*<br>2. Տրանսպորտային միջոցի նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և ապահովագրություն՝ 5 տարվա համար կազմում է **1 411 355** ՀՀ դրամ:<br>3. Տրանսպորտային միջոցի վառելանյութ՝ 5 տարվա համար կազմում է **2 900 847** ՀՀ դրամ:<br>4. Ծրագրի շահառուների տունայցերի, տարբեր հանդիպումների կազմակերպման և մասնակցության համար տրանսպորտային միջոցի (մարդատար ավտոմեքենա) ձեռքբերում՝ **15 193 360** ՀՀ դրամ:<br>5. Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ՝ 5 տարվա համար կազմում է **8 011 242** ՀՀ դրամ:<br>6. Կոմունալ ծառայություններ՝ 5 տարվա համար կազմում է **3 689 273** ՀՀ դրամ:<br>7. Աուդիտորական ծառայություն՝ 5 տարվա համար կազմում է **10 309 780** ՀՀ դրամ:<br>8. Անձնակազմի ապահովագրություն՝ 5 տարվա համար կազմում է **4 340 960** ՀՀ դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | 9. Ծրագրի առաջընթացն ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվելու է նախնական (ծրագրի սկզբում առկա իրավիճակի գնահատում), ընթացիկ (կարճաժամկետ արդյունքների գնահատում՝ համոզվելու համար, որ ծրագիրն ընթանում է ըստ պլանավորվածի) և վերջնական գնահատում (հավաստիանալու համար, որ ծրագիրն իրագործել է իր առջև դրված նպատակները)՝ 5 տարվա համար կազմում է **8 460 531** ՀՀ դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև համապատասխան մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ　　　　　　　　Տ. ԱՎԻՆՅԱՆ